Նորաթուխ ներդրողների առաջին “արջի” շուկան

Դեռ ոչ շատ վաղ անցյալում ֆինանսական շուկաները բավականին փակ և անհասանելի ոլորտ էին: Բաժնետոմսերի, պարտատոմսերի կամ ածանցյալ գործիքների առքուվաճառքը վստահված էր դրա համար հատուկ պատրաստված և երկար տարիներ կրթություն ստացած մասնագետներին: Մարդկանց համար նման գործարքները կատարվում էին բրոքերների կողմից, որոնք նաև որոշ չափով խաղում էին ֆինանսական խորհրդատուների դերը: Սակայն 21-րդ դարը կտրուկ փոփոխությունների դար է, և այդ փոփոխություններից մեկն էլ ֆինանսական շուկաների մասսայականացումն է:

Ամերիկյան ֆիլմերում հաճախ ցուցադրվում է ֆինանսական աշխարհի սիրտը՝ ՈՒոլ Սթրիթը, որտեղ բանկերի և ներդրումային ընկերությունների աշխատակիցները անընդհատ զանգերի և բանակցությունների մեջ են, սակայն այդ սպիտակ վերնաշապիկով և մոխրագույն պիջակով կարծրատիպային երիտասարդները այլևս ֆինանսական շուկաների միակ մասնակիցները չեն: Տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ հնարավոր է դարձել ֆինանսական գործարքներ իրականացնել սմարթֆոնի հավելվածի կամ համակարգչի միջոցով, առանց մասնագետների մասնակցության կամ խորհրդատվության: Երիտասարդ սերնդի մոտ ֆինանսական գրագիտության ձգտումը, իհարկե, ողջունելի է, և ապագայում կարող է հանգեցնել ավելի կայուն և կանխատեսելի ֆինանսական դրության թե՛ անհատների համար և թե՛ ամբողջ շուկայում: Սակայն վերջին շրջանում ֆինանսների, ներդրումների կամ բաժնետոմսերի հետ կապված ինֆորմացիոն տեղատարափը կարող է հակառակ ազդեցություն ունենալ: Սոցիալական ցանցերում ներդրումային խորհուրդներ տալիս են բոլոր ցանկացողները, իսկ նրանք միշտ չէ, որ համապատասխան կրթություն, փորձ, գիտելիք կամ որակավորում ունեն: Հաշվի առնելով, որ պատմականորեն բարձր

մակարդակի վրա է համեմատաբար վերջերս ֆինանսական ներդրումների աշխարհ մտած մարդկանց տոկոսը, նմանատիպ խորհրդատուների առկայությունը դառնում է էլ ավելի վտանգավոր: Համավարակի պայմաններում, երբ միլիոնավոր մարդիկ կորցրին իրենց աշխատանքը, ներդրումների կարևորությունը շատերի համար անհամեմատ աճեց: Հատկապես երիտասարդ սերունդը սկսեց շատ ավելի մեծ ուշադրություն դարձնել ֆինանսական շուկաներին, ընկերությունների բաժնետոմսերին և այլն:

Անցյալ տարեսկզբին մեծ հանրայնություն ստացավ Reddit սոցիալական կայքի WallStreetBets խումբը, որտեղ նորաթուխ ներդրողները հավաքվում և քննարկում էին իրենց կատարած կամ կատարելիք գործարքները: Նրանք նույնիսկ համախմբվեցին և փորձեցին արհեստականորեն բարձրացնել որոշ ընկերությունների բաժնետոմսերի գները, անկախ դրանց եկամտաբերությունից կամ հեռանկարներից: Որոշ դեպքերում դա նրանց նույնիսկ հաջողվեց:

Եթե նայենք, թե ներկա պահին ինչ տրամադրություն է տիրում այդ խմբում, կհասկանանք, որ ֆինանսական ներդրումներ կատարելը իրականում այդքան էլ հեշտ և միանձնանակ գործընթաց չէ: Խմբի անդամներից մեկի վերջերս կատարած գրառումը հետևյալն է. պարզվում է՝ ներդրումներ կատարելը բավականին բարդ է, երբ փողն այլևս օդից չի ընկնում: Օգտատերը նկատի ուներ զարգացած երկրների կառավարությունների կողմից համավարակի ժամանակ օժանդակության առատաձեռն ծրագրերը, ինչպես նաև զրոյական տոկոսադրույքները և ընդհանրապես կենտրոնական բանկերի աննախադեպ ընդլայնողական քաղաքականությունը, որոնք դադարել են վերջին մի քանի ամիսների ընթացքում:

Խնդրի պատճառը ուղղակի ֆինանսական շուկաների բնականոն ընթացքն է, որտեղ պարբերաբար տեղի են ունենում թե՛ դրական, թե՛ բացասական տատանումներ: Ներկա

պահին բազմաթիվ գործոններ բացասաբար են ազդում ֆինանսական շուկաների վրա, ինչի արդյունքում համավարակից հետո ներդրումային աշխարհ մտած անփորձ ներդրողների համար սա առաջին “արջի” շուկան է: “Արջի” շուկայում են համարվում 20-ից ավել տոկոսով արժեզրկված ինդեքսները կամ առանձին ակտիվները: 2020-ից այս կողմ՝ ընդհուպ մինչև տարեսկիզբ, ֆինանսական շուկաները գրավիչ արդյունքներ էին գրանցում: Հատկապես համավարակի սկզբնական շրջանում կտրուկ արժեզրկված ընկերությունները նույնքան կտրուկ աճ գրանցեցին, մեծամասամբ գերազանցելով 2020-ի սկզբի ցուցանիշները: Ամերիկյան S&P 500 ինդեքսը ռեկորդային բարձրունքի վրա էր, երբ գեո-պոլիտիկ զարգացումները, համավարակով պայմանավորված՝ Չինաստանի մի քանի քաղաքներում խիստ սահմանափակումները և տասնամյակներ չտեսնված մակարդակի գնաճը փոխեցին ամբողջ աշխարհում ակտիվների շարժման վեկտորը: Նման շուկայական պայմաններում առաջնահերթ է դառնում ներդրողների պատրաստվածությունն ու պրոֆեսիոնալիզմը:

Անցյալ տարի ներդրումային օնլայն-հարթակի օգտատեր անգլիացի մի 20-ամյա տղա ինքնասպան եղավ -730,000 թիվը տեսնելուց հետո: Դա նրա՝ օրվա վերջի մնացորդն էր ներդրումային օնլայն հարթակում, որը, իրականում պետք է վերածվեր դրական թվի հաջորդ օրը, երբ իր կատարած գործարքների փոխանցումները կատարվեին: Չհասկանալով, թե ինչ է կատարվում և մտածելով, որ նա 730,000 ԱՄՆ դոլարի պարտքեր է կուտակել, երիտասարդն իր կյանքին վերջ էր տվել: Հաշվի առնելով վերջին շրջանում ֆինանսական շուկաների անկայունությունը, նման ողբերգական դեպքերը շատ ավելի հավանական են հիմա, քան վերջին երկու տարիների ընթացքում, երբ շուկաներն անընդհատ աճում էին:

Երիտասարդների շրջանում նաև մեծ հանրայնություն վայելող կրիպտոարժույթների թեման էլ արդիական է: Դրանց անկայունության ֆոնին ֆինանսական ինդեքսների 20-տոկոսանոց անկումը ուղղակի փոքրիկ շեղում է, քանի որ կրիպտոարժույթների մեծամասնության արժեքն ընկել է ավելի քան 70%-ով: Նման անկայուն ակտիվների մեջ ներդրումներ կատարելը մեծագույն ռիսկեր է պարունակում, և դժվար է ասել, թե ներդրողների որ մասն է ամբողջովին հասկանում այդ ռիսկերը և դրանց հետևանքները:

Մասնագետները խորհուրդ են տալիս չմատնվել խուճապի և ներդրումները դիտարկել որպես երկարաժամկետ գործիքներ, որոնք ժամանակի ընթացքում կարող են թե՛ խելահեղ աճ ունենալ, թե՛ աննախադեպ անկում ապրել: Ավելի երկար ժամանակահատված դիտարկելիս նույն S&P 500 ինդեքսը շատ ավելի հուսալի ներդրում է հանդիսանում: ՈՒոլ Սթրիթի ամենահայնտի արտահայտություններից մեկը հետևյալն է. անվճար լանչ գոյություն չունի: Ֆինանսական շուկաների տատանումներից միշտ էլ հավանական է, որ որոշ մարդիկ խոշոր եկամուտներ ստանան, սակայն այդ մետաղադրամի հակառակ կողմում կլինեն բազում այլ մարդիկ, որոնց կարողությունը զգալի նվազել է: Գումարը բախտի քմահաճույքին հանձնելու շատ ավելի հաճելի տարբերակներ գոյություն ունեն, քան ֆինանսական բարդ և անհասկանալի գործիքները: Հեշտ և արագ հարստանալու մտադրությամբ, սակայն գումարը քամուն տալու պատրաստակամությամբ ավելի ճիշտ կլինի խաղատուն այցելել: Մեր սմարթֆոններն ու համակարգիչները դա էլ են հնարավոր դարձրել ամենուրեք և ցանկացած պահի: